

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա

ԱՌԻԹ ԵՒ ԵՂՈՒՄ

ՍԻՄՆ անցեալ տարուան նոյեմբերի թիւին մէջ իրեն եղած հարցման մ'ի պատասխան լուսարանութիւն մը տուած էր, քանի մը բառով մատնանիչ ընելով եկեղեցիներու տարբերութեանց հիմքերը: Այդ լուսարանութիւնը, որ ներկայ նկատողութիւնները ստորագրողին կողմէ տրուած էր յանուն Սիոնի, թիւրիմացութեանց և ընդդիմական անդրադարձութեանց առիթ տուաւ բողոքական շրջանակներու մէջ, ինչպէս կ'ենք եւ մէկ քանի բողոքական թերթերու տոնուածի արտայայտութիւններէն: Սիոնի յարգելի և թանկագին աշխատակիցներէն Ֆ. Յ. Մ. ալ նամակ մը գրած էր խմբագրութեան՝ նոյն առթիւ, որպէս թէ «զբլ-խաւոր անճշտութիւնները ուղղելու» համար: Այդ նամակը հրատարակուեցաւ Սիոնի այս տարուան փետրվարի թիւին մէջ:

Ինչպէս ուրիշ առթիւ ըստուած է նոյն այս էջերէն՝ հակաճառութենէ կը խորշինք մի միայն այն պատճառաւ որ ճշմարտութեան մը յայտագրութիւնը իր նպատակէն կը շեղեցնէ ան: Եթէ օրաթերթերու վիճաբանութեանց ճշով գրէինք՝ թէ՛ այդ նամակին և թէ՛ բողոքական թերթերու մէջ գրուածները շատ ընդարձակ նիւթ կըրնային հայթայթել մեզի: Բայց մենք կը բաւականանանք հիմնական կէտերու շուրջ խիտ նկատողութիւններով: Համադրեալ ու ներդաշնակ գրութիւն մը չէ որ կու տանք. այդ՝ չափէն աւելի լայն խարխալ մը դրնելու աշխատանքը և ժամանակը կը պահանջէ: Այլ ինչ ինչ տեղիքներ կ'ընդդիմադրենք յարուցուած առարկութիւններուն՝ ջանալով հիմնաւորել Սիոնի լուսարանութեան հաւատարմութիւնը: Ո՛չ նամակէն, ո՛չ ալ ուրիշ ընդդիմադրութիւններէն մէջբերումներ չենք ընել: Ընթերցողը պէտք է աչքի առնէ ունենայ գէթ մեծարդոյ Ֆ. Յ. Մ. ի նամակը՝ մեր պնդումներուն ինչի՞ դէմ եղած ըլլալը հասկնալու համար:

Բայց աստի՛ նամակին դէմ չէ որ կը գրենք. նամակը որոշ դասակարգի մը մտայնութեան նմոյշ մըն է կերպով մը, ստուգա-

նման վճիռներով, որոնցմէ սակայն, բաւական մէկ մասը, կամ մ'սխալութեանութիւններ են, կամ ալ մե'ր և ամէնուն կողմէ ընդունուած ճշմարտութիւններուն ընդկուզումը անճիշդ կարծիքներու հետ: Այս վերջին պարագան մանաւանդ՝ շատ պատրոզ է, եւ ընթերցողէն բաւական աշխրջութիւն կը պահանջէ յարգը ցորենէն զատելու համար: Այդ կարողութիւնը վստահ ենք թէ ունին մեր բանիմաց ընթերցողները:

Մեզի տարախոհ գտնուողները մեզի համար սիրելի և յարգելի են. մանաւանդ նամակագիրը՝ մեծարդոյ Ֆ. Յ. Մ.: Այս սկզբնատառերուն ետեւ բազմաճառ և ազնիւ քրիստոնեայ հոգիի մը անունը կայ. զայն կը մեծարենք ըստ ամենայնի. բայց կ'ըսենք ինչ որ ճշմարիտ է, կամ գէթ՝ ինչ որ մեր համոզումն է թէ ճշմարիտ է:

Բ

ԵԿԵՂԵՑԻ ԲԱՌԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Եկեղեցի բառը արդարեւ զանազան առումներ ունի: Նախ՝ կը նշանակէ Գրիստոսի կողմէ հիմնուած և առաքեալներով հաստատուած ընկերութիւնը, անոր բոլոր անդամները առնելով իբր ամբողջութիւն մը: Այս նշանակութեամբ Եկեղեցի բառը գործածուած կայ Մտթ. ԺԶ. 18-ին մէջ, ուր կը խօսուի որոշ կազմակերպութեան մը մասին՝ չէնքի յատկանշական նմանաբանութեամբ: Յաջորդ 19րդ համարն ալ կարեւոր է Եկեղեցի բառին այս իմաստով ըմբռնումին տեսակէտէն. բայց յետոյ պիտի ակնարկենք ատոր: Մանանեխի հատիկէն յառաջ եկած մեծ ծառն ալ մէկ պատկերն է Եկեղեցիին, որ յաճախ «Երկինքի Արքայութիւն» կամ «Աստուծոյ Արքայութիւն» բացատրութիւններով կը ցուցուի: Թէ այս նոյնացումը ստորդ է՝ խնդիր չի կրնար ըլլալ. կը բաւէ միայն համեմատել Մտթ. ԺԶ. 18-ը յաջորդ համարին հետ: Նոյն այս նշանակութեամբ՝ կայ գործածուած Գործք. Ե. 11-ին, Ը. 3-ին, Թ. 31-ին մէջ և ուրիշ տեղեր, ուր եկեղեցւոյն մկրտութեամբ անդամակցած հաւատացեալներու ամբողջութեան կ'ակնարկուի: Այնքան կազմակերպուած ընկերութիւն մըն էր Եկեղեցին՝ որ հասարակաց ստացուածք ալ կը պահէր կամ կը գործածէր (Գործք. Ե 1-8):

Երկրորդ նշանակութեամբ՝ Եկեղեցի բառը կը ցուցնէ Ընդհանուր Եկեղեցիին տեղական մէկ մասնաձիւղը. ինչպէս Գործի Ը. 3-ի մէջ և այլ տեղերւ Այսպէս կ'ըսուէր «Անտիոքի Եկեղեցի», «Երուսաղէմի Եկեղեցի»: «Առանին Եկեղեցի»ն, յիշուած չորս տեղ նոր կտակարանի մէջ՝ զատ ստորոգութիւն ընկելու հարկ չկայ: Տեղական յարմարութեան հետեանքով որոշ տեղ մը հաւաքողներու ակնարկութիւն է ան, որ նախորդ կամ հետեակ նշանակութեան ներքեւ կ'իյնայ հասկցողութեան կերպին համաձայն:

Երրորդ՝ հաւատացեալներու հաւաքոյթը որոշ շէնքի մը մէջ: Այս նշանակութեամբ՝ Ա. Կորնթացոց ԺԼ 18, և այլն: Այս վերջին իմաստէն հանուած է հաւաքավայր եղող շէնքին տրուելը եկեղեցի բառին, որ շատ ընդհանրացած է:

Կը տեսնուի թէ ըստ ինքեան տարբեր իմաստներ չեն ասոնք. այլ պարզապէս համապարփակութեան աստիճաններ, մասը ամբողջին կամ մասնաւորը ընդհանուրին տեղ տոնուած:

«Եկեղեցիք Անդրակաց»ը իր յատկացուցչով միայն զատ իմաստ մը կ'առնէ: Ասկէ զատ՝ այս առումը կապ մը չունի մեր խնդրոյն հետ, վասնզի հրեշտակներու և հանգուցեալ հոգիներու հաւաքականութեան կ'ակնարկէ և կազմակերպեալ հաստոյթի մը բնոյթը չունի. թէ և կարծեմ կան աղանդներ՝ որոնց համար եկեղեցի բառին միակ առումը այս է, և Անդրակաց Եկեղեցիէն զատ ուրիշ եկեղեցի չեն ճանչնար, մեկուսացնելով Պողոս Առաքեալի Եկեղեցիին մասին ունեցած տեսակէտներէն մէկը:

Գ.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն Կ Ա Ճ Ի

Պէտք է նկատել սակայն՝ թէ նոր կտակարանը բառարան չէ. այլ հոգիի և իմաստի գանձարան մը: Հոն կը գտնուին բառեր, բացատրութիւններ՝ կերպեր՝ որոնք պատմական արժէք մ'ունին միայն և անկէ անդին չեն անցնիր: Կարեւորը՝ այդ բառերուն բովանդակութիւն տուող ոգին է: Օրինակի համար՝ հիւանդութիւնը զներու վերագրելու պարագան: Մենք հիւանդու-

թիւն բառին խտութիւնն ու բովանդակութիւնը հասկնալու համար Աւետարանի բացատրութեան վրայ չենք կոթնիր: Նմանապէս՝ մեռելներու համար մկրտութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ հետագայ դարերուն իր իմաստն ու արժէքը կորսնցուցած է: Մկրտութեան իմաստը բացատրելու և անոր սահման մը տալու համար Կոր. ԺԵ. 29-ին վրայ չենք հիմնուիր: Բայց եկեղեցի բառը, բարեբախտաբար, իր նոր կտակարանական իմաստը բոլորովին կը պահէ, և այդ իմաստը վաղնջարանութիւն մը չի կրնար նկատուիլ: Ընդհակառակը՝ Եկեղեցին կենդանի գործարանաւորութիւն մըն է, որ կ'ապրի. ընկերութիւն մը, կազմակերպութիւն մըն է աստուածահաստատ, և իբր այդ իր հիմքերը, սահմանները և նկարագիրն ունի: Քրիստոսի Եկեղեցիին էութիւնը, բովանդակութիւնը և հնարաւորութիւնները տեսնելու համար որոշ և կարճ ժամանակամիջոցի մը, ինչպէս է նոր կտակարանի չրջանը, արտաքին պայմաններն ու վիճակը զիտել բաւական չէ: Որեւէ որոշ ժամանակի կացութիւնը վերջնական տիպը չէ Եկեղեցիի արտաքին կազմաւորութեան, որքան ալ սկզբունքները մնան միշտ նոյն: Մանաւնխի հատիկէ մը մեծցող ծառ մըն է ան, որուն սերմը Քրիստոս զբաւ հոգին մէջ: Նոր կտակարանի գրուած ժամանակներուն Եկեղեցիին փափուկ տունի մըն էր, և իր աճման ձեւերը և եղանակը զօրութեանաբար (potentiellement) միայն իր մէջ ունէր: Աստուծոյ զործին ու ծրագրին ու յառաջդիմութեան սկզբունքին դէմ է ըսել՝ թէ Աստուած ուղեց թողուլ Եկեղեցիին այնպէս՝ ինչպէս էր անիկա իր կեանքի առաջին դարերուն — վախ առնել մը: Վախ տունի մը՝ բայց զօրաւոր կենսունակութեամբ, յոյժ զօրաւոր, և անհուն հնարաւորութիւններով: «Վասնզի երբ երրորդ սերունդը հաղիւ թէ կը ճանչնար առաքեալներուն աշակերտները, և խանդավառութիւնը կը նուազէր՝ պէտք էր որ քրիստոնէութիւնը կամ ուժասպառ տկարանար և կամ հաստատուն ձեւեր և սահմանումներ ստանար»: (Լոյս, 1905, Երես 554): Այս այսպէս ըլլալով՝ եթէ նոյն իսկ եկեղեցի բառին սահմանը նոր կտակարանի մէջ որոշ եղած չըլլար (թէ և բարեբախտա-

բար շատ սրու է), Եկեղեցին բնաւ պիտի չվարանէր, և մանաւանդ սխալ էր վարանիլ ինքն իրեն ինչ բլլալուն սահմանը տալու: Եկեղեցին բրածոյ չէ: Հետեաբար երբ անոր սահմանը, հիմքերը և նկարագիրը նշանակել պէտք բլլայ՝ Ն. Կոտակարանին հետ նկատի կ'առնուին նաեւ Եկեղեցիին Պատմութիւնը, Եկեղեցիին ինքն իր մասին Ս. Հոգւոյն առաջնորդութեամբ և գիտակցօրէն տուած սահմանները, ի սկզբանէ և՛ կամ Աւանդութիւնը՝ և ասոնց յարակիցները: Այս ըսուածը ա՛յնքան պայծառ և հաստատուն է, և այս պայծառութիւնը և հաստատունութիւնը Եկեղեցիին բխելով ա՛յնքան անոխալ է՝ որ բոլոր քաշքշուքները՝ հով ևն և ուրիշ ոչինչ: Ուստի՝ եկեղեցի բառին «բուն իմաստով» համար ի հարկէ ի Ս. Գիրս գիմելու պնդումը կիս մը սխալարանութիւն է: Քրիստոնէական Եկեղեցին առաջին դարուն իր կազմակերպութեան յոյժ նախնական վիճակին մէջ էր: Եկեղեցիի մասին Քրիստոսի նպատակը առաջին դարուն չէր որ իրագործուէր: յոյժ ժամանակի վիճակը վերջնական և միակ ընդունելին նկատել՝ անտեղի է: Եկեղեցին միշտ կազմաւորելու վրայ է՝ Քրիստոսի նպատակին համաձայն: Օձնեցի, Հյգ. Եկեղեցւոյ մեծ հայրերէն՝ կ'ըսէ. «Եւ մանաւանդ երեւելի եկեղեցի Աստուծոյ համապատասխան յարաբերութեամբ աճելու համար: Եւ այդ նպատակը՝ աշակերտները և առաքեալները լիովին ըմբռնած չէին նախ, և կամ ինչ որ ըմբռնած էին հնար չէր գործադրել շուտով՝ առաջին ժամանակներուն: «Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն զառաջինն»:

Այժմ քսան դարերու վրայ անընդհատ շարունակութեամբ երկարածուած պատկառելի Եկեղեցին՝ ուրեմն, զուտն ունենալով Քրիստոս Տէրը, և մէկ ծայրէն մինչև միւսը Ս. Հոգիով կենդանացած՝ է «բուն իմաստով» ճշմարիտ Եկեղեցին: Այս առումով Եկեղեցին կը գրենք գլխաւոր. և կուտանք զայն իբր մակդիր՝ Ուղղափառ Եկեղեցիին միայն, կամ որ նոյնն է՝ Ուղղափառ Եկեղեցիներու ամբողջութեան, առանց այս յոգնակի կիրարկութեան մէջ բողոքաւորութիւն մը տեսնելու:

Այս պատճառաւ տակաւին երեք դար առաջ բուսած բողոքականութեան «Եկե-

ղեցի» մակդիրը տալը «բուն իմաստով» մեղանշում մըն է Քրիստոնէական Եկեղեցիի ըմբռնումին ու վարդապետութեան գէժ: Բայց միայն երեք դարու բոյս մ'եղած բլլալը չէ բողոքականին Եկեղեցիի չըլլալուն պատճառը. ուրիշ պատճառներ ալ կան: Զանոնք ալ յաջորդաբար կը տեսնենք:

Դ.

ԵԿԵՂԵՑԻՆ ՍՏՈՐՈՂԵԼԻԲՆԵՐԸ

Նիկիա-Կոստանդնուպոլսական Հանգանակը, որ Եկեղեցւոյ հաւատքին առաջին պաշտօնական բանաձևն է՝ (Նիկիա բանաձևից և ո՛չ թէ նոր հաւատալիքներ ստեղծեց), «Մի, Ընդհանրական, Առաքելական, Սուրբ Եկեղեցի»: Այս չորս ստորոգելիները իրարու հետ կապուած են անխզելիօրէն: «Մի» կ'ակնարկէ Եկեղեցիի համապարփակութեան, «Ընդհանրական»ը՝ տարածանքին, «Առաքելական»ը՝ սկիզբին և տեսողութեան, «Սուրբ»ը՝ բնութեան: Այս ստորոգելիքները Եկեղեցւոյն նկարագիրը կ'որոշեն և անոր սահման մը կը գծեն՝ ուրիշ դուրս գտնուողներ ուղիղ կամ «բուն իմաստով» Եկեղեցիի մաս չեն կազմեր:

Մէկ է Եկեղեցին՝ վասնզի մէկ է անոր Հիմնադիրը. մէկ է այդ Հիմնադիրն մասին Եկեղեցւոյ հաւատքը և ասոր արտայայտութիւնը եղող հաւատալիքը, զոր պէտք է դաւանին անոր բոլոր անդամները. մէկ սերմէ բուսած մէկ ծառ մըն է ան՝ որ կ'աճի քսան դարերէ ի վեր՝ և պիտի աճի յաւիտեան. մէկ է պայմանը անոր մէջ ընդունելութեան (Մկրտութեան խորհուրդը). մէկ է պայմանը անոր մէջ ապրելու (Հաղորդութեան խորհուրդը). վերջապէս մէկ է այն Հոգին որ կը կենսաւորէ զայն. մէկ է այն Աւետարանը զոր ապրելու և քարոզելու համար զոյութիւն ունի: Ս. Պօղոս Առաքեալ ալ նոյն միտքէն է. «մէկ է Տէրը, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն. մէկ Աստուած և բոլորին Հայրը: ... Աստուծոյ Որդւոյն գիտութեան և հաւատքին մէկ միաբանութեան» (Եփս. Դ. 4-5):

«Ընդհանրական» է Եկեղեցին՝ նախ վաղնջի ուղղափառ հաւատքը, քաւութիւնը և սրբութիւնը բոլոր մարդոց համար է: Երկրորդ՝ բոլոր ուղղափառ քրիստոնեաները իր մէջ կը բովանդակէ: Աւետարան

նին վարախին մէջ բոլոր մարդիկը առնելը՝ իր մշտնջենական յարացոյցն է։ Իսկ ունէ ժամանակ ապրող բոլոր ուղղափառ քրիստոնեաները իր մէջ պարունակելը՝ առնոր ներկայական (actuelle) հանգամանքն է։ Եկեղեցին մարդոց միջև որևէ էական խտրութիւն չ'ընդունիր։ Քրիստոս յորդիմ համար է հաւատարապէս։ Ուստի Եկեղեցին՝ ըլլալով ընդհանուրին համար՝ է ընդհանրական։ Որչափ մարդիկ մտնեն այս «Բնդհանրական» Եկեղեցին մէջ՝ այնքան աւելի մօտեցած կ'ըլլայ Եկեղեցին իր այդ հանգամանքին՝ և աւետարանական, քրիստոնէական իր յաւիտեանական նպատակին։

«Առաքելական» է Եկեղեցին՝ վասնզի Քրիստոս հիմնեց և առաքելներ կազմաւորեցին զայն, իրենց Գլուխ, Պետ, Հիմնադիր Քրիստոսէն ստանալով իշխանութիւնը՝ քարոզելու և մշտնջենաւորելու իր Աւետարանը (Աւետարան բառով Գիրքը չ'է հասկցուի. այս մասին ալ յետոյ)։ Առաքելներ՝ որոնք միւս հաւատացեալներու հետ՝ Եկեղեցին իսկ էին, իրենց տիրատու իշխանութիւնը աւանդելին և փոխանցելին Եկեղեցին, կամ՝ ի դէմս այդ Եկեղեցին՝ անոր պաշտօնեաներուն, նուիրապետութեան՝ ետքի բառով։ Ուրեմն՝ Եկեղեցին Քրիստոսէ և միջնորդաբար առաքելներէ ստացած Աւետարանով, Քրիստոսական հաւատքով, և այդ Աւետարանը քարոզելու իշխանութեամբ և կոչումով՝ ըսուած է Առաքելական։ Առաքելականութիւնը կը պահուի և կը շարունակուի՝ ձեռնադրութեան խորհուրդով, որ յաջորդաբար կը փոխանցէ առաքելական իշխանութիւնը և կոչումը եպիսկոպոսներուն և տնոնց միջոցաւ միւս պաշտօնեաներուն։ «Առաքելական յաջորդութիւնը առաքելական ժառանգութեան լրութիւնը կ'երաշխաւորէր» (Լոյս, 1905, էջ 555)։ Պէտք է միայն Քրիստոսի Պետրոսին ըսածը. «Ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ», Ս. Պօղոս Առաքելի հաւատումին հետ՝ թէ Եկեղեցին «շինեալ է ի վերայ հիման առաքելոց և մարգարէից»։

Վերջապէս՝ «Սուրբ» է Եկեղեցին՝ վասնզի սուրբ է իր Դուռը Քրիստոս, որ իր արեամբը սրբեց զայն. սուրբ է իրեն կեանք տուող ոգին. սուրբ է իր պաշտօնը և կատարելիք առաքելութիւնը. աս-

տուածային՝ ուստի և սուրբ է իր իշխանութիւնը. սուրբ է Եկեղեցւոյ գործին հոգեւոր պտուղը. սուրբ են իր խորհուրդները, օրէնքները, վարդապետութիւնները և վախճանական նպատակը՝ որուն կը ձկտի հասնիլ օտնհար ընկելով Սատանը։ (Եփես. Ե. 26, և այլն)։

Եկեղեցւոյն անդամները անձնապէս սուրբեր կոչուած են Նոր Կտակարանին մէջ՝ ո՛չ անշուշտ սուրբ բառը առնելով իր բացարձակ իմաստով. այլ յարաբերական իմաստով՝ ակնարկելով աղամային մեղքէ մկրտութեամբ ազատման և շնորհքի ընդունելութեան։

Հանգանակին մէջ գործածուած այս մակդիրները ճշմարիտ Եկեղեցւոյն նշաններն են, բայց այս նշանները գործնական ընծայող տարրերն են որ Եկեղեցւոյն կեանքին երակները կը կազմեն և որոնց մէջէն արիւնը, կեանքը կը հոսի արբուցանելու համար հաւատացեալները։

Տ. Վ. Ն.

ՊԱՇԵՑՈՂ ՈՒԹԻՒՆ

Բ. Կերպիր. — «Հերմասի Հովիւ»ը իբրև հնագոյն աղբիւր (առաջին դար), կ'ըսէ. «ճշմարիտ առաքինութեան համար օգուտ չ'ըներ պարզ արտաքին պահք մը. երբ կը պահես բաւականացիր հացով, բանջարեղէնով և ջրով, և շնորհակալութիւն յայտնէ Աստուծոյ. սակայն հաշուէ՝ թէ այդ օրքու ճաշդ ինչ պիտի արժէր, և աւելցածը տուր այրիի մը, որբի մը կամ աղքատի մը»։ Կիւրեղ Երուսաղէմացի Հայրապետ կը բացատրէ՝ թէ ինչու պահքի օրերում կը հրաժարին միսէն և զինիէն, և թէ «մի օք մատիցէ առ ոգեկորոյս մանիքեցիսն որ